

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՅ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Տ. Սահակ վարդապետի Բաղդա-
ստրեանի, որով կարգեցաւ անդամ վանական Կառավա-
րութեան Մայր Աթոռոյ: Թ. 710,

— Յանուն Առաջնորդի Հայոց Ամբրիկայի Տ. Յովսէփ
արքեպիսկոպոսի, որով լուծեցաւ պսակն Խարբերդցի
Աղաւնոյ Միքայէլեան Պաղտիկեան ընդ առն նորա Գէ-
որգայ, տալով միայն կնոջն իրաւունս վերստին ամուս-
նութեան: Թ. 746.

— Յանուն Առաջնորդի Թեմին Հայոց Բեսսարաբիոյ
Տ. Ներսէս արքեպիսկոպոսի, որով պատուիրեցաւ ձեռ-
նագրել ի քահանայ զընծայացուն Տօպրիչ քաղաքի զեր-
ուանդն Ղօնչէկիւլեան: Թ. 754.

— Յանուն Տ. Սարգիս եպիսկոպոսի, վանահօր մե-
նաստանին Սեանայ, որով պատուիրեցաւ զիրաւունս վա-
նացն վասն կալուածոց պահանջել դատաստանական
կարգաւ: Թ. 768.

— Յանուն Ամեն. պատրիարքի Հայոց Թուրքիոյ,
որով լուծեցաւ պսակ Զմիւռնիացի Սոփիայի Ղաւճեան
ընդ առն Անդրէասայ Մարտիկեան, տալով միայն կնոջն
իրաւունս վերստին ամուսնութեան: Թ. 782.

— Յանուն նորին, ընդ որում յղեցաւ խնդիր նա-
զարէթի Ծերունեան էվէրէկցոյ Կեսարիոյ, որ վասն

ամուսնալուծութեան, առ ի տալ քննել և զարդիւնս քննութեանն առաջի առնել ի տնօրէնութիւն: Թ. 783.

— Յանուն նորին, ընդ որում յղեցաւ ի տնօրէնութիւն իսկական խնդիր Պալակէս գեղջ Կեսարիոյ, որով բողոքէ զարարմանց քահանայի գեղջ: Թ. 784.

— Յանուն Ամեն. պատրիարքի Հայոց Ս. Երուսաղէմի, որով յանձնարարեցաւ ծանուցանել զառիթս կարգընկէց առնելոյ զՅովհաննէս սարկաւազն Կարագէօղեան: Թ. 785.

— Յանուն Առաջն. խորհրդարանի Հայոց Ն. Զուղայի, որով իբրև բացառութիւն վասն վիճակին, տուաւ արտօնութիւն, [թոյլ տալ զպսակս վեցերորդ աստիճանի ազգականութեան և չորրորդ աստիճան խնամութեան և երրորդ աստիճան խնամութեան հանդերձ խորթութեամբ ի հօրէ և ի մօրէ: Թ. 786.

— Յանուն Փոխանորդի վիճակին Հայոց Աղէքսանդրապօլու, Տ. Կիւրեղ վարդապետի. որով տուաւ գիտել՝ եթէ ընտրողական թերթը հոգաբարձուաց եկեղեցական ծխական ուսումնարանաց Հայոց քաղաքին յղեցան ի տնօրէնութիւն փոխ թեմակալին Հայոց Երևանայ, զի հաստատութիւն հոգաբարձուաց ուսուցչաց պարտին լինել ի ձեռն առաջնորդաց: Թ. 793.

— Շրջաբերական կոնդակը յանուն Առաջնորդաց Հայոց հնգից թեմից Ռուսաստանի, որովք տուան ինչ ինչ հրահանգութիւնք վասն հոգաբարձուաց և ուսուցչական կազմի ըստ մտաց «Ժամանակաւոր կանոնաց յաղագս կառավարութեան գոյից հայ-լուսաւորչական եկեղեցեաց ի սահմանս Փոխարքայութեան Կովկասու»: Թ. Թ. 802, 803, 804, 805 և 806.

— Յանուն գործակալի եկեղեցեաց Եկատերինօղարի, որով լուծեցաւ պսակ Տաճկահպատակ Սարգսի Մարկոսեան Ռուստեանց ընդ կնոջն Նազլուի, արտօնելով առն պսակիլ ընդ Դշխուհոյ Զօլեան: Թ. 813.

— Յանուն Տ. Ղևոնդ եպիսկոպոսի, որով կարգեցաւ նախագահ Յանձնաժողովոյ անդամակցութեամբ վարդապետացն՝ Եղիշեայ Մուրադեան, Յուսկանն Զոհրաբեան, Մատթէոսի Մատթէոսեան և Գարեգնի Յովսէփեան առ ի կաղմել զնախահաշիւս մտից և ելից Ոայր Աթոռոյս վասն 1906 ամիս թ. 817.

— Յանուն Տ. Սահակ վարդապետի Բաղդասարեան, որով կարգեցաւ հիւրընկալ հիւրատան Մայր Աթոռոյս թ. 818.

— Յանուն վիճ. Կոնսիստորիայի հայոց Աստրախանի, արտօնեցաւ բնակչուհւոյ Ղզլար քաղաքի Ովսաննայի Բեբութեանց ընդ առն Լալայեան մտանել ի նոր ամուսնութիւնս թ. 828.

— Յանուն վիճ. Կոնսիստորիայի հայոց Երևանայ, որով լուծեցաւ պսակ գաղթական Խաչատրոյ Գրիգորեան եղիազարեանց ընդ թալալոյ, ընդունելոյ զկրօն մահմետի, տալով իրաւունս առն մտանել ի նոր ամուսնութիւնս թ. 844.

— Յանուն Հոգ. Կառավարութեան հայոց Կարուց, որով լուծեցաւ պսակ Տաճկահպատակ Զարուհոյ Տ. Նիկողայոսեան Կարազեօղեան ընդ անյայտացեալ առն Գէորգայ, տալով կնոջն իրաւունս վերստին ամուսնութեանս թ. 847.

— Յանուն Հոգ. Կառավարութեան հայոց Կարուց, որով լուծեցաւ պսակ Տաճկահպատակ Փիրոսի Սերովբեան Ենկոյեան ըստ անընդունակութեան ամուսնական պարտաւորութիւն առն նորա վասիլի Մինասեան Մխէյեան, տալով կնոջն իրաւունս վերստին ամուսնութեանս թ. 848.

Բ.

Հայրապետական օրհնութիւնք եւ զոհունակութիւնք.

Կոնդակ յանուն Տիկին Սոփիայի Նազարեան Իզմիրեանց վասն սիրալիր ընդունելութեան Վեհափառ Հայրապետի ազգիս ընդ յարկաւ իւրով: Թ. 744.

— Յանուն պ. Կոստանդնի Իւղբաշեան վասն օգտակար գործակցութեան նորին յազգային գործս: Թ. 745.

— Յանուն պ. Միքայէլի Թորոսեան Արմաւիրցւոյ վասն նուիրաբերութեան միոյ շուրջառի և միոյ սպիտակ շապկի ի կիրառութիւն Մայր Տաճարի Ս. Էջմիածնի: Թ. 752.

— Յանուն եղբարց Պետրոսեանց Ագուլեցւոյ վասն նուիրաբերեալ միոյ գորգի: Թ. 753.

Գ.

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ Յանուն Տ. Վռամշապուհ քահանայի Գիւպարեան՝ Հոգեւոր հովուի հայոց Փարիզու, որով շնորհեցաւ պատիւ աւագ քահանայութեան: Թ. 778.

— Վարդապետական լանջախաչի յանուն Տ. Արսէն վարդապետի Վեհանւոյ Սուչաւայի: Թ. 781.

**

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՅ

Օգոստոսի 22-ին Սինօդը որոշեց պատուիրել Ռուսաստանի հայոց բոլոր Կոնսիստորեաններին կազմել և շուտով ներկայացնել իւրաքանչիւր Կոնսիստորիայի և